Ծ Ր Ա Գ Ի Ր

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԺԱՄԿԵՏ

ԵՐԵՎԱՆ 2022

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամը ստեղծվել է (վերակազմակերպվել է) ՀՀ կառավարության 06.08.2021թ. 1298-Ա որոշմամբ:

Հիմնադրամի պետական գրանցման համարն է՝ 222.160.1199866:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի նպատակներն են (ըստ կազմակերպության կանոնադրության).

1. Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումն իր իրավասության սահմաններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու տարածքային կառավարման մարմինների կողմից մշակված՝ տրանսպորտի ոլորտի կապիտալ ու զարգացման ծրագրերի մասով (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի) և օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերն ու աշխատանքները,

2. Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման օժանդակությունը,

3. Միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների հետ համատեղ իր իրավասության սահմաններում ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման, օգտագործման և պահպանման իրականացման բնագավառում օժանդակության և աջակցության ծրագրերի մշակումը,

4. Ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման, օգտագործման և պահպանման վերաբերյալ գիտական հետազոտությունների, լաբորատոր և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպումը, ուսումնասիրությունների և գնահատման ու վերլուծությունների իրականացումը,

5. ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման պատճառների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացումը և առաջարկություններ ներկայացնելը,

6. ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրությունների և գնահատման իրականացումը և վերականգնողական միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

7. ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների նախագծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքների մշակումը,

8. միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատումը, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

9. ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների շինարարական աշխատանքների վերաբերյալ մասնագիտական կարծիքի տրամադրումը,

10. ճանապարհաշինական նյութերի և արտադրանքների լաբորատոր փորձաքննությունների իրականացումը,

11. ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների թերությունների ակտերի, անհրաժեշտության դեպքում, նախահաշվի կազմումը և աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

12. ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների թերությունների ակտերի կազմումը և աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

13. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով դրամաշնորհների հատկացման դեպքում, ճանապարհային ոլորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում գնման գործընթացի կազմակերպումը, այդ թվում՝ պայմանագրերի կնքումը:

«Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի խնդիրներն են (ըստ կազմակերպության կանոնադրության).

1. վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման շրջանակներում աշխատանքների կատարման նախնական ժամանակացույցի և ծրագրի նախնական նախահաշիվների կազմումը, եթե ծրագրերի կամ դրանց բաղադրիչներից մեկի իրականացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրերով վերապահված չէ երրորդ անձի
2. վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով մրցույթների անցկացումը, մրցութային հայտերի և առաջարկների գնահատումը, վերլուծումը, մրցույթների արդյունքների ամփոփումը, պայմանագրերի կնքումը և դրանցից բխող պարտավորությունների կատարման նկատմամբ շարունակական հսկողության իրականացումը.
3. միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը և սահմանված կարգով աշխատանքների ընդունումը
4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ճանապարհաշինության բնագավառում կատարվելիք գնումների դեպքում "Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները:

5. ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման, նորոգման և պարբերական պահպանման աշխատանքների կատարման հատվածներում երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,
6. ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման, նորոգման և պարբերական պահպանման աշխատանքների կատարման հատվածներում երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը և այլն:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

"Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, միջազգային պայմանգրերով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Գնել Սանոսյան /Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար/,

Գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյան

2. Աշխատողների անուն ազգանունները և պաշտոնները ներկայացված են հաստիքացուցակում:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամ գործունեության ոլորտներն են՝

Հայաստանի Հանրապետությունում ճանապարհաշինության ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովում:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Հիմնադրամի կողմից իրականացվում են հետևյալ ճանապարհաշինական ծրագրերը՝

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր,
- Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր
- Հայաստանի կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր
- Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարության ծրագիր
- Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագիր

Ծրագրերի նպատակներն են

1) հարևան երկրների հետ հաղորդակցման դյուրինացումը, միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգումը և վերակառուցումը,
2) Կենտրոնական Ասիա, Եվրոպա ձգվող հաղորդակցության ուղիներով դեպի արտաքին շուկաներ ելքի հնարավորությունների ընդլայնումը և դյուրինացումը,
3) տնտեսության հիմնական ոլորտների զարգացումը և արտահանման ընդլայնումը,
4) բնակչության ներքին շարժերի ակտիվացումը:

Ծրագրերի իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի ԱԺՈ-187-Ն որոշումը, ԱԺՈ-186-Ն որոշումը, ԱԺՈ-280-Ն որոշումը, ԱԺՈ-119-Ն որոշումը, ԱԺՈ-118-Ն որոշումը, Ազգային Ժողովի Ն-131-4 որոշումը, ՀՀ Կառավարության 407-Ա որոշումը և այլն:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Ծրագրերն իրականացվում են ՀՀ պետական բյուջեի և վարկային միջոցների հաշվին:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել անժամկետ:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

- ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներով անվտանգ երթևեկության ապահովում,
- ՀՀ ավտոմոբիլային թունելներով և կամուրջներով անվտանգ երթևեկության ապահովում,

- Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների վերազինում,
- Ճանապարհային ցանցի երկարակեցության, որակի և արդյունավետության բարձրացման նպատակով մշակված և հաստատված ճանապարհաշինության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում,
- Ճանապարհային ցանցի երկարակեցության, որակի և արդյունավետության բարձրացում, միջազգային ստանդարտներին համապատասխան բարձրակարգ ճանապարհային ցանցի առկայություն:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ՀՀ-ն կունենա միջազգային չափորոշիչներին համապատասխան ճանապարհներ, կբարելավվի ճանապարհային ցանցի երկարակեցությունը, որակը և արդյունավետությունը, կկրճատվեն ճանապարհների երկարությունը, կկրճատվեն Ճանապարհի անսարքությամբ պայմանավորված ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը, ճանապարհաշինության ոլորտում կներդրվեն նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդներ, կներդրվի Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման արդյունավետ համակարգ, ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացում և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում :

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն Գ. Ավետիսյան

Կատարող Կ. Հովհաննիսյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Իրավաբանական բաժին
հեռ.՝ 010 511 391 (ներքին 215)
էլ. փոստ՝ karen.hovhannisyan@armroad.am